Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

34

ԽԵԼԱԳԱՐ ԱՆԴՐԵԱՍԸ

Մորուք Կարոն մի ամբողջ ամիս սարերում ապրեց: Եղավ Ամբերդի ավերակներում, գիշերեց Կաքավաձորի և Դիանի քարայրներում, ցորենի բարդոցների տակ թաքնվեց:

Մի օր էլ մի գերանդի գտավ սարում և ուսին գրած ձին քշեց դեպի Գեղամա լեռները: Ուզում էր ճշտել, թե ո՛ր ճանապարհով հեշտ կլիներ դեպի Մեղրի և Ջուլֆա գնալ:

Ապարանի վրայով իջավ Եղվարդ և Արզականի կիրճով բարձրացավ Թեղենիսի լանջերը: Բարձր սարերով էր գնում, որ իրեն չնկատեն: Մաքրավանք գյուղի թիկունքին թամբաձև մի սար կա: Կանգնեց այդ սարի վրա և հայացքը հառեց Գեղամա լեռներին:

Դեռ բավական ճանապարհ ուներ անցնելու:

Յած իջիր ձիուց, Անդրանիկ փաշա, լսվեց մի հրամայական կանչ իր ետևում և մի տղամարդ ոչխարենու մաշված գդակով՝ տակից ականջները կարմիր թաշկինակով կապած՝ մանգաղը ձեռքին ցցվեց նրա դեմ:

Չեծ յալը ժպտաց.

Ո՞վ է Անդրանիկ փաշան:

Ես եմ Անդրանիկ փաշան: Դու էդպես մենակ ու՞ր կերթաս:

Աղմաղանի սարերը հնձի կերթամ, պատասխանեց Կարոն:

Անդրանիկ փաշան բոլոր սարերը հնձել է: Ցած իջիր փաշի ձիուց:

Դու երևի նրա ձիապանն ես եղել: Նրա ձիու անունը ի՞նչ էր:

Չրեղեն: Քո գերանդին ինձ տուր, կամ ցած իջիր փաշի ձիուց:

Գերանդի՞ն: Ինչու՞:

Տանեմ Սերոբ փաշին տամ, իսկ դու գնա ոզնի բռնիր Նեմրութա սար:

Նեմրութա սարը շատ է հեռու, իմ ճամփեն Աղմաղանն է:

Հեռու չէ: Անդրանիկ փաշան տաս օր ժամանակ է տրվել օսմանցու զորքին: Դու Մորուք Կարոն չե՞ս:

Մորուքն եմ, ի՞նչ կա:

Անդրեաս փաշին չե՞ս ճանաչում:

Մորուք Կարոն վայր թռավ ձիուց: Առաջին իսկ հայացքից զգաց, որ իր առաջ կանգնած է մի խելագար:

Անդրեա՛ս, ասաց ու գրկեց խելագար հայդուկին:

Տուր գերանդին, տուր գերանդին, որ վաղը հնձի երթանք:

Դու տուն ունե՞ս, Անդրեաս:

Անդրանիկ փաշեն իմ տուն նստած Սերոբ փաշի հետ գրույց կենե: Ուղիղ տաս օր ժամանակ է տվել, իսկ օսմանցին ասել է. «Ես տաս օրվա մեջ իմ վեշերը ինչպե՞ս կապեմ»: Երեկ ես փաշին ասացի, երկու օր էլ ավելացրու՝ թող վեշերը կապեն:

Փաշեն ի՞նչ ասաց:

Չէ, ասաց փաշեն, իմ ժամկետը տաս օր է: Կայծակ Անդրեասը կովի բռնվելով Իբրահիմ խանի հետ մասնակցել էր Սարդարապատի ճակատամարտին և իր պահանջով ձիու թամբին կապված ուղևորվել էր դեպի Լոռի: Ջին վիրավոր Անդրեասին Սարդարապատի դաշտից հասցրել էր մինչև Թեղենիսի լանջերը: Եվ այդ օրվանից Կայծակ Անդրեասը մնացել էր Ծաղկաձորում, չկարողանալով հասնել Անդրանիկի զորքին: Ուժեղ ապրումներից, որ ուշացել է, խախտելով հայդուկ կամավորի սրբազան ուխտը, Անդրեասը ցնորվել էր և ամենքը նրան խելագար Անդրեաս էին ասում: Այդ խելագարությունը արտահայտվում էր խիստ անհավասարակշիռ ձևերով. մեղմ ժպիտից մինչև հանկարծական քրքրիջ, խելացի խոսքից թռիչք դեպի անհարակից, անկապ խոսքեր, շշուկից մինչև գոռոց և հայհոյախառն բացականչություններ, և այդ բոլորը զուգորդված իր վաղուց ապրած վայրերին ու սիրելի անուններին, անցյալի դեպքերին ու տպավորություններին: Կերպարանքը դարձյալ սարսափազդու էր, բայց ոչ առաջվա պես ահեղ: Անծանոթ ուղևորները երբեմն նրան շփոթում էին թաթերին բարձրացած արջի հետ: Ջուր խմելիս դարձյալ երեսը մինչև ականջները խորասուզում էր աղբյուրի մեջ, երկայն ցից բեղերը ծփացնելով ջրի երեսին: Ապա արևի տակ բեղերը ցամաքեցնելով և բարակ ոլորելով տաքանում էր մի ժայռի նստած:

Կայծակ Անդրեասը ամառները մանգաղով հնձում էր Թեղենիսի լանջերը, իսկ ազատ ժամերին Ծաղկաձորի դարիվեր փողոցները չափչփելով սրտակեղեք երգեր էր ասում իր քաջ զորավարի մասին: Բավական էր որևէ անցորդի բերանից լսեր «ուշացա» բառը: Ես ի՞նչ մեղավոր եմ, որ ուշացա: Ինձ կապեցին ձիու թամբին ու ասացին՝ «Գնա հասիր Անդ՛րանիկ փաշի զորքին», գոռում էր նա և երեք անգամ ուշացա, ուշացա, ուշացա՛ բացականչելով, բռունցքով հարվածում էր քունքերին ու քայլամոլոր շարունակում ճամփան:

Սովորաբար շրջում էր ոչխարենու հնամաշ գդակով, տակից կարմիր թաշկինակը ականջներին կապած, և ոստոտ գավազանը դրած ուսին: Վա՛յ նրան, ով իր ներկայությանը հանդգներ որևէ կծու խոսք ասել Անդրանիկի մասին: Ասողի բաժինը մի անողոք նայվածք էր կամ գավազանի հարված, իսկ

իր բաժինը՝ դառնագին հեծկլտուք «Կեչառիս» խորտկարանի մի անկյունում օղու գավաթի առաջ նստած: Դառնանում ու հայհոյում էր՝ մինչև ուշ գիշեր իր երգն ու լացը, գայրույթյանն ու թախիծը իրար խառնած: Ու գնում էր խելագար Անդրեասը ինքն իր հետ կամ անցորդների հետ բարձրաձայն վիճելով և իբրև օրվա կարևորագույն նորություն հավաստելով ու հաստատելով թե՝ «օսմանցին արդեն սկսել է իր վեշերը կապել»:

Ծաղկաձորում խորհրդավոր կերպով պատմում էին, որ Կայծակ Անդրեասը իր գդակի տակ պահում է Կովկասի փոխարքայի հրամանը Բաղեշը գրավելու մասին: Այդ այն հեռագիրն էր» որ Անդրանիկը բարկացած շպրտել էր ՌահվեԴուրանի ձյուների վրա իբրև բողոք թագավորի դեմ: Այդպիսի մի թուղթ իսկապես Անդրեասը գաղտնի պահում էր իր գդակի մեջ և առաջին տեսնողը եղել էր Ծաղկաձորի շրջանային գործադիր կոմիտեի նախագահը, որին վերջինս դիմել էր իրեն ծերության թոշակ նշանակելու հարցով:

Սերոբ փաշեն ի՞նչ ասաց, իր խոսքը շարունակեց Մորուք Կարոն»

Սերոբ փաշեն ասաց՝ Անդրեաս, մի գերանդի գտիր, վաղը հնձի երթանք:

Ո՞ր սարը:

Տանձաղբյուրի:

Ձեր գյուղում կոլխոզ կա՞, Անդրեաս:

Կա: Անդրանիկ փաշեն կոլխոզի նախագահ է, իսկ Սերոբ փաշեն՝ գործկոմի: Գնա Բիթլիսու սար մի քիչ խոտ քաղիր նրանց ձիերի համար: Ռահվե–Դուրան գնա, Ռահվե–Դուրան: «Ճվիկե տոտանի, ճվիկե տոտանի, քո տունը քանդեցիր, իմն էլ դրիր վրան»:

Իմ ճամփեն Աղմաղան է, Անդրեաս: Ես իմ ճամփից շատ ուշացա:

Ուշացա, ուշացա՛, ուշացա՛, գոռաց Անդրեասը քունքերին խփելով: Ես ի՞նչ անեմ, որ ուշացա: Ինձ կապեցին ձիու մեջքին ու ձին ինձ բերեց Եղվարդ: եղվարդից բերեց Կեչառիս ու չկարողացա հասնել Լոռի: Տուր Անդրանիկ փաշի

ձին, որ գնամ հասնեմ նրա զորքին:

Տուն գնա, Անդրեաս, գնա հանգստացիր, ասաց Մորուք Կարոն:

Ինձ հանգիստ չկա, մինչև չհասնեմ փաշի զորքին: Ասաց, նորից խփեց քունքին և մանգաղն ու մի կապ խոտ թևի տակ, շարժվեց առաջ:

Գնում էր ու երգում,

Բիթլիս քաղաք շատ լեռնային, նամակ չկար Անդրանիկին... »

Անդրե՛աս, բղավեց Կարոն խելագարի ետևից: Բայց նա արդեն հեռացել էր և հանգ–հանգ ծիծաղելով գնում էր դեպի Ծաղկաձոր:

Հանկարծ ետ դարձավ:

Մորու՛ք, տղաներին շատ բարև կանես ու մանավանդ Սեյդո Պողոսին, որ նստած էր Ծծմակա Քթին:

Մի աղջիկ նրան տեսնելով ճչալով նետվեց դեպի իրենց բակը:

Մայրի՛կ, խելառ Անդրեասը… Մայրը դուրս եկավ.

Բարև, Անդրեաս քեռի:

Բարին արևդ, Տիրուն:

Անդրեաս քեռի, Անդրանիկ զորավարը ինչու՞ Հայաստանը թողեց գնաց ու քեզ էս օրին գցեց:

Վշտից գնաց, Տիրուն, վշտից: Անդրանիկ զորավարը երբ տեսավ, որ խաբված է դրսից ու ներսից, բարկացած հեծավ իր Ասլան ձին, քշեց անցավ Գեկեչկորու տերության սահմանը և Սև ծովին հասնելով ասաց՝ Եվրոպա, դո՛ր ես, եկա:

Հիմա որտե՞ղ է:

Յատուկ Պոէմ

Կոլխոզի գրասենյակ:

Քա վուՙյ կանաչ մեռոն էս մարդը իսկական խելառ է:

Ի՞նչ է, Անդրեաս:

Մի քանի գաթա թխիր, վաղը Բշնի պիտի երթամ:

Բշնի ի՞նչ գործ ունես:

Մի որբևայրի կին կա, կուզեմ բերեմ իմ տուն:

Հարսանիքը դու անես, գաթեն ե՞ս թխեմ: Երևանում աղջիկներ ունես, թող նրանք թխեն: Ի՞նչ տեսակ կին է:

Քեզ պես սիրուն, կարմրաթուշ կին է: Կուրծքը ասես Ռահվե–Դուրան լինի հունիս ամսին, մեջքը՝ Խլաթա կամուրջ: Խածնեմ թշերդ, Տիրուն:

Քա աղջի, դու ներս գնա տեսնեմ էս խելառն ինչ է խոսում, ասաց ծազկաձորցի կինը, դուռը աղջկա վրա կիսածածկ անելով:

Ու՞մ թշերը խածնես:

Քո թշերը, Տիրուն, քո կարմիր թշերը: Անդրանիկի ձին Ռահվե–Դուրանում մի օր իմ թևը պինդ խածեց: Երկու սանձ էի դրել բերանը, բայց խածեց: «Ճվիկե տոտանի, ճվիկե տոտանի, քո տունը քանդեցիր՝ իմն էլ դրիր վրան»:

Կարոն ինքն էլ չիմացավ, թե ինչպես հասավ Գեղամա լեռներին: Ամբողջ ժամանակ խելագար Անդրեասն էր իր աչքի առաջ:

Մեղրին և Զուլֆան շատ հեռու թվացին իրեն: Աժդահակ սարի տակով ձին քշեց դեպի Մարտունու շրջանի Վերին Գետաշեն: Մշո Աղջան գյուղացի հազարապետ Վահանն էր այնտեղ թաղված: Սպանվել էր Ջղնի ձորում: Ինքը և Չոլոն դիակը կապել էին ձիու վրա և տարել ամփոփել այդ գյուղի եկեղեցու բակում:

Յատուկ Պոէմ

Աղջնա Վահանի մահից հետո կինը՝ Խաթունը ամուսնացել էր նրա զինվորներից մեկի հետ: 1930-ին նոր ամուսինը՝ Պետրոսը երկու կով էր վաճառել և Թալինի Ցամաքաբերդ գյուղից գնացել էր Մարտունի՝ Վերին Գետաշեն ու իր կնոջ նախկին ամուսնու շիրմին հուշարձան կառուցել:

Մորուքը մտավ եկեղեցու բակը, գլխարկը հանեց տապանաքարի առաջ և լռությամբ հարգանք մատուցեց սասունցոց գնդի քաջարի զինվորի հիշատակին:

Հետևյալ օրը նրա ձին կանգնեց Արագածի վրա:

ՄԻԼՊԵՏԻ ԾՈՑՈՒՄ

Մութ էր:

Մորուք Կարոն իջավ ձիուց, կանգնեց ձիու կողքին ու մտածեք. ու՞ր գնալ: Նորի՞ց ապավինել լեռներին:

Մի հավք անցավ իր վերևով: Երկար նայեց ետք՛ից: Հավքը գնաց թառեց մի քերծի: Ապա թևերը ծալեց ու սուզվեց ժայռի մեջ: «Նա էլ մտավ իր բույնը, մտածեց Կարոն, իսկ ե՞ս»:

Հիշեց:

Սարդարապատի դաշտում մի ծանոթ գյուղ կար, անունը Զանֆիդա: Նրանից աչն կողմը՝ հին Արմավիրի մոտ մի ուրիշ գյուղ Մեծ Շարիար: Այնտեղ նա տալվորիկցի մի բարեկամ ուներ, նախագահ էր գյուղում:

«Արի էս գիշերը Ռաշիդիս հյուրը լինեմ», ինքն իր մեջ խոսեց Մորուք Կարոն:

Քշեց Կարոն իր ձին և գիշերով իջավ Մեծ Շարիար:

Ռաշիդը մենակ նստած գինի էր խմում:

Ուրախացավ Արարատյան դաշտի գյուղացին իր շեմքին պատվական հյուրին տեսնելով:

Շեմքի վրա գրկախառնվեցին:

Նախ ձիուն գարի, հետո տիրոջը հաց, պատվիրեց Կարոն գերանդին պատից կախելով:

Ռաշիդը ձին տարավ գոմ, իսկ Կարոյին՝ օդա: Ձիու առաջ գարի դրեց, հյուրի առաջ՝ հաց: Հանեց իր ամենաընտիր կա՛րասի գինին, որ երբեք բացած չկար:

Հողե աման ունե՞ք, հարցրեց Կարոն:

Ռաշիդն հասկացավ, որ Կարոն վիշտ ունի: Կինը մի խոր պնակ բերեց հյուրի համար:

Մի պնակ էլ ինձ համար բեր, ասաց Ռաշիդը գինու փոքրիկ գավաթը մի կողմ հրելով:

Կինը մի պնակ էլ բերեց:

Հավ մորթեցին, թթու հանեցին ու նստեցին սեղան: Պնակները զարկվում էին իրար ու դատարկվում: Պատրաստվում էին քնելու, երբ լուսամուտի դեմ մի գլուխ երևաց.

Նախագահը տա՞նն է, լսվեց դրսից:

Տանն է, ներս համեցեք, պատասխանեց Ռաշիդը և ճրագը ձեռքին մոտենալով դուռը բացեց:

Եկողը Էջմիածնի գավառամասի միլպետ սուրմալեցի Վաչագանն էր, առույգ, գեր ու կարճլիկ, թխադեմ մի տղամարդ: Նա հենց շեմքից նկատեց, որ շեկ բեղերով մի գյուղացի նախագահի տանը նստած կավե ամանով գինի է խմում: Առաջին անգամ էր տեսնում մեկին, որ գինին պնակով է խմում: Պետին դուր եկավ այդ գյուղացին: Եվ որովհետև ինքն էլ ի պաշտոնե այդ գավառամասի գրեթե բոլոր կարասների գինին փորձել էր, ուստի շատ ուրախացավ, որ այդ գիշերը դարձյալ առիթ ուներ շփվելու խմիչքի հետ:

Էս ի՞նչ հալի եք, ձեռքերը աշխուժորեն իրար տրո՛րելով հարցրեց միլպետ Վաչագանը:

Նստած գինի ենք խմում, ընկեր պետ, պատասխանեց Ռաշիդը նրան թախտի վրա տեղ առաջարկելով և ճըրագը դնելով պատուհանի գոգը:

Գինին պնակներո՞վ: Առաջին անգամն եմ տեսնում:

Մեր երկրում գինին պնակներով են խմում, ավելացրեց Կարոն:

Ձեր երկիրը ո՞րն է:

Արաբս տան:

Մեծ Շարիարի գինին հայտնի է մեր գավառամասում և արժե այդ գինին պնակներով խմել, ասաց միլպետը: Ո՞ր կարասից է քաշված:

Իմ մառանի ամենաընտիր կարասից, ընկեր պետ: Քիչ առաջ բաց արի, ասաց տանտերը:

Մորուք Կարոն գինով լի ամանը դեմ արեց Էջմիածնի միլպետին:

Մի տես ի՛նչ գինի է:

Ոչ, պնակով գինին շատ է: Ես պաշտոնյա մարդ եմ և գործով եմ եկել գյուղ:

Չիմա գինու ժամն է, գործը հետո կանես, նկատեց Կարոն:

Դու երևի վաղուց գինի խմած չկաս, որ պնակով ես խմում: Եվ քո պնակը կրկնակի խոշոր է նախագահի ամանից:

Պատահում է և այդպես, ընկեր պետ: Կարասին ասացին. ինչի՞ց ես վախենում. ասաց՝ փոքր ամաններից:

Երկուսն էին՝ դարձան երեք: Կինը նոր հավեր մորթեց և երեքով սեղան նստած խմեցին մինչև կեսգիշեր: Միլպետն ու նախագահը գավաթներով էին խմում, իսկ

Կարոն՝ կավե ամանով: Խմեցին ու գրույց արին:

Ամեն մեկը սեղանի առաջ մի հետաքրքիր բան պատմեց: Հյուրն էլ պատմեց կորեկի և ցորենի վեճը:

Կորեկը քառասուն օրից է բերք տալիս, ասաց Մորուքը, իսկ ցորենը ավելի ուշ: Մի տարի Մշո դաշտում սով էր: Գյուղացիք սկսեցին կորեկ ցանել, որ սովի առաջը փակեն: Կորեկը փքվելով ցորենին ասաց.

Ցորեն ախպեր, ես ելել եմ բեմ:

Ի՞նչ անեմ, տարին քո տարին է, ասաց ցորենը:

Կուզեմ երթամ Երուսաղեմ:

Ձենդ կտրիր. մի էս պլպլան աչքով պարծենկոտին տես: Կուզես աշխարհը սո՞վ գցել, գոռաց ցորենը և բարկացած դմբեց կորեկի գլխին:

Սարից եկած հյուրը իր պատմություններով և քաղցր բնավորությամբ գերեց սուրմալեցուն: Միլպետ Վաչագանի կենացի վրա Կարոն նրա պատվին երգեց «Սուրմալու» երգը, որ սովորել էր վերջին թափառումների ընթացքին Արագածի վրա:

Չկա զանգակի ձայն, չկա հայ բարբառ, Դառել ես բնավեր, պայլերի անտառ, Դպրոցներով հարուստ մարդասեր գավառ, Օձն է նստել բախտիդ վրա, Սուրմալու:

Վա՛յ էս ինչ լավ մարդ ես, լավաշի մեջ փաթաթես ուտես:

Միլպետը հուզմունքից գրկեց համբուրեց հյուրին և նըրան իր տուն հրավիրեց՝ Էջմիածին: Այնքան դուր եկան մեկը մյուսին, որ գիշերը քնեցին իրար հետ, միևնույն թախտի վրա:

Առավոտ վաղ Մորուք Կարոն արթնացավ, հեծավ իր ձին, առավ գերանդին ու գնաց:

Յատուկ Պոէմ

Դիանի և Կաքավաձորի անձավները վերևից աչք էին թարթում՝ մեզ. մոտ արի: Ամբերդի ավերակները հեռվից կանչում էին արի, մենք քեզ տուն կտանք:

Միլպետն արթնացավ, լվացվեց, հաց կերավ և նախագահին մի կողմ քաշելով՝ ասաց.

Ռաշիդ, ախր ես կարևոր գործով եմ եկել Մեծ Շարիար:

Ի՞նչ գործ է:

Տեղեկություն է ստացված, որ Մորուք Կարոն գտնըվում է ձեր գյուղում: Գուցե և Ջանֆիդա գյուղումն է թաքնըված, կամ Արմավիրում: Եկել եմ քեզ մոտ, որ օգնես ինձ Մորուքին գտնելու: Դրան էլ բռնեմ հանձնեմ ու հոգիս ազատեմ էդ ցավից: Ուղիղ երկու օր է տղաներով գյուղերն ընկած նրան ենք փնտրում:

Քո տունը շինվի, ընկեր պետ, Մորուք Կարոն էն էր, որ գիշերը քնուկ էր քո ծոց, խնդալով պատասխանեց Ռաշիդը:

Միլպետը զարմանքից սփրթնեց:

Ինչպե՞ս թե: Էն գյուղացին, որ պնակով գինի՞ էր խըմում:

Հա՛, Մորուք Կարոն նա էր:

Ու՞ր գնաց:

Առավոտ շուտ արթնացավ, հեծավ իր ձին ու գնաց:

Դու ճի՞շտ ես ասում: Ուրեմն դա՞ է եղել Մորուք Կարոն:

Հենց նա է, որ կա:

Որ ցորենի ու պլպլան կորեկի պատմությունն արեց:

Այո:

Էն գյուղացի՞ն:

Հա, էն գյուղացին, որի հետ դու համբուրվեցիր և գիշերը միասին քնեցիք թախտի վրա, հանգիստ պատասխանեց Ռաշիդը:

Քնելը հիշում եմ, բայց համբուրվելը… մի՞թե համբուրվեցի:

Այն էլ մի քանի անգամ: Իմ կարասի գինին խմողը չի կարող չհամբուրվել:

Միլպետ Վաչագանը մոտեցավ սեղանին, վերցրեց այն պնակը, որով Մորուքը գինի էր խմել, զարմացած նայեց մեջը, հոտոտեց և դրեց տեղը:

Ուղղակի անհավատալի բան է. այն մարգը, որին դու փնտրում ես, մտնի քո ծոցը և քո ձեռքից փախչի՞: Ախ՛պեր, եթե Մորուք Կարոն դա է, հալալ լինի նրան իր ծծած կաթն էլ, իր խմած գինին էլ: Էսքան ապրել եմ աշխարհում, ես դեռ էդպիսի խոսքաշեն անուշ մարդ տեսած չկամ, ասաց սուրմալեցին: Բայց ի՞նչ արած, մեզանից պահանջում են: Ուզենք թե չուզենք պիտի բռնենք և հանձնենք: Ես չբռնեմ ուրիշը պիտի բռնի: Օձն է նստել էդ մարդու բախտի վրա: Երեկ Թալինից զանգահարեցին, թե նա կարող է մեր կողմերում լինել: Տվեցին Ջանֆիդայի և ձեր գյուղի անունը: Հայտնեցին, որ նա վաղուց փախստական է դարձել և ապրում է սարերում: Մերթ այս ձորի կամ քարայրի մեջ է, մերթ այն քարափի գլխին, մերթ մի ավերակ բերդի դռան, մերթ ծանոթ–բարեկամի գոմում: Երբեմն էլ հավքերին թոցնում՝ մտնում է նրանց բույնը: Մի քանի անգամ գիշերով եկել-թաքնվել է իրենց բուխարիկի մեջ և կինը բուխարիկի բերանը ծածկել է սալաքարով: Իբրև թե այնքան երկար մորուք ունի, որ մի անգամ բուխարիկի բերանը ծածկելիս, մորուքի կեսը մնացել է սալաքարի տակ: Եթե Մորուք Կարոն նա է, որ մենք երեկ տեսանք, ապա նա բոլորովին էլ մորուք չունի: Չէ, ես նրա մեղքի տակ չեմ մտնի, Ռաշիդ, վճռաբար հայտարարեց միլպետ Վաչագանը:Այդ գյուղացին ինձ դուր եկավ և իմ խղճին դեմ է նրան բռնելը: Հա, մի բան հիշեցի. ձեռքին գերանդի կա՞ր:

Կար:

Յատուկ Պոէմ

Չենց նա է, որ կա: Մեզ հայտնեցին, շարունակեց միլպետը, որ Աշտարակի և Թալինի լեռնային մի քանի գյուղերում հնձվորները նկատել են մի տարօրինակ երևույթ. ինչ–որ մեկը գիշերով գալիս և իրենց կիսատ թողած գործը ավարտելով լուսադեմին հեռանում է: Եթե խոտհարք է՝ խոտը քաղված, եթե արտ է՝ լրիվ հնձված, երբեմն էլ խրձերը կապած և թողած դաշտում: Ենթադրում են, որ դա Մորուք Կարոն կարող է լինել: Այդ ամբողջ ժամանակ միայն մի գերանդի է անհայտացել սարից: Դե եկ, և այդպիսի մարդուն բռնիր. ի՞նչ իրավունքով: Վերջերս ինչ–որ բան է նկատվում մեզ մոտ, Ռաշիդ, որ իմ սրտովը չէ և, իմ կարծիքով, հակառակ է ընկեր Լենինի պատգամներին:

Նրան ներում էր շնորհվել: Կառավարությունը անգամ թույլ էր տվել, որ վերադառնա գյուղ և զբաղվի իր վարուցանքով, հաստատեց նախագահը:

Տեսնու՞մ ես: Իսկ որոշ մարդիկ կարգադրել են նրան բռնել: Որ Մորուքին կբռնեն, դա անկասկած է, բայց թող մեր ձեռքով չլինի: Նա գիշերով եկավ քեզ մոտ, այնպես չէ՞, հարցրեց միլպետը:

Այո, մութով եկավ և մութով գնաց:

Ուրեմն՝ որոշեցինք. դու կասես, որ քո տանը այդպիսի մարդ չի եղել: Ռուսերեն դրան ասում են «սուխոյ ատկազ»: Կնոջդ էլ զգուշացրու, որ բերանը փակ պահի: Ծանր օրեր են, Ռաշիդ, մի բուռ ժողովուրդ ենք մնացել, պահենք մեր լավերին: Լսեցի՞ր ինչ ասաց. կարասին հարց տվին. ինչի՞ց է վախենում, ասաց փոքրիկ ամաններից:

Այս ասելով միլպետ Վաչագանը նախագահի հետ ելավ գյուղամեջ, ձևականության համար հարցաքննեց մի քանի բնակիչների և մեկնեց շրջկենտրոն:

Յատուկ Պոէմ